13861

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«17» 12 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 286 - 24

Նախաձեռնող՝ *«Հատշին քոնսթրաքթ» ՍՊԸ*
Կոտայքի մարզ,Նոր գյուղ, 1-ին փ., շ. 7

Գործունեությունը՝ *Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի 1-ին փողոցի 7 հասցեում հասարակական նշանակության օբյեկտի վերակառուցում բնակելի թաղամասի և նոր մասնաշենքի կառուցում*
Կոտայքի մարզ

Առդիր՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 286-24

«17» դեկտեմբեր 2024 թ.

Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի 1-ին փողոցի 7 հասցեում հասարակական նշանակության օբյեկտի վերակառուցում բնակելի թաղամասի և նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Հատշին քոնսթրաքթ» ՍՊԸ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ
Գործունեության տեսակ՝	Բ կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Ակունք համայնք, Նոր գյուղ բնակավայր

Ներածական մաս. «Հատշին քոնսթրաքթ» ՍՊԸ-ի կողմից Նոր գյուղ բնակավայրի 1-ին փողոցի 7 հասցեում նախատեսվում է հասարակական նշանակության օբյեկտի վերակառուցում բնակելի թաղամասի և նոր մասնաշենքի (այսուհետ՝ Թաղամաս) կառուցում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է: Թաղամասի կառուցապատման համար նախատեսված հողամասը զբաղեցնում է 2,9383 հա մակերես: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Թաղամասի կառուցումը նախատեսվել է իրականացնել 2024 թվականի մայիսի 13-ին Ակունքի համայնքապետարանի կողմից տրված թիվ 59 նախագծման թույլտվության պահանջներին համապատասխան:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը զբաղեցնում է 2,938 հա մակերես, որտեղ առկա են 10 հասարակական և գյուղնշանակության մասնաշենքեր:

Նախատեսվում է վերակառուցել գոյություն ունեցող մասնաշենքերից 4-ը, կառուցել 2 նոր բնակելի մասնաշենք, 3 առանձնատուն կամ 6 «թաունհաուս» տիպի առանձնատուն: Տարածքը հարավային կողմից սահմանակից է գլխավոր մայրուղուն, իսկ մյուս երեք կողմերում պարփակված է ներքին ավտոճանապարհներով: Բնակելի շենքերը գտնվում են մայրուղուց 70-75 մ հեռավորության վրա: Գոյություն ունեցող 4 հարկանի մասնաշենքը

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

վերակառուցվելու է 5 հարկանի բնակելի շենքի, 3 հարկանի մասնաշենքը՝ 4 հարկանի բնակելի շենքի, միահարկ մասնաշենքը՝ «թաունհաուս» տիպի առանձնատների, 4-րդ մասնաշենքը՝ արագ սննդի կետի և սուպերմարկետի: Բնակելի նոր մասնաշենքերը նախատեսվել են 8 հարկանի: Տարածքում լինելու են ավտոկայանատեղիներ, զրուցարաններ, խաղահրապարակ, ծաղկանոց և այլն:

Ըստ նախագծի նախատեսվում է շինարարությունն իրականացնել 2 փուլով:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Հաշվետվությունում նախատեսվել են շրջակա միջավայրի վրա ազդեցությունները մեղմացնող մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառվել են բնապահպանական կառավարման պլանում:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ: Ստացված կարծիքներն ամփոփվել են, ներկայացվել են մի շարք դիտողություններ և հաշվետվությունն ուղարկվել է լրամշակման: Ընկերության կողմից հաշվետվությունը լրամշակվել է թերի, առկա են բազմաթիվ անհամապատասխանություններ նախագծի և հաշվետվությունում ներկայացված ցուցանիշների ու տվյալների միջև:

Փորձաքննական հիմնավորումներ

1. Հաշվետվության լրամշակված տարբերակում առկա են մի շարք թերություններ և կան ցուցանիշների անհամապատասխանություններ նախագծի հետ, մասնավորապես.

– նախագծում, հաշվետվությունում և կանաչապատման նախագծում ներկայացված են կանաչապատման մակերեսի տարբեր ցուցանիշներ՝ նախագծում՝ 8467 մ^2 (29 %), հաշվետվությունում՝ 7972 մ^2 (27 %), իսկ կանաչապատման նախագծում՝ 7972 մ^2 (40 %),

– նախագծում և հաշվետվությունում նախատեսվող գործունեության տարածքի մակերեսի վերաբերյալ ներկայացված են հակասական տեղեկություններ (նախագծի բացատրագրում 29270 մ^2, հաշվետվությունում՝ 29383 մ^2),

– հաշվետվությունում սխալ է ներկայացված կառուցվող թաունհաուսների թիվը (մի տեղ նշված է 13, մյուս տեղում՝ 16 թաունհաուս), նախագծի բացատրագրում ևս ներկայացված են հակասական տվյալներ,

– հաշվետվությունում, նախագծում և գլխավոր հատակագծում նախատեսվող զրուցարանների թիվը տարբեր է,

– նախագծի գլխավոր հատակագծում բնակարանների թիվը նշված է 262, իսկ հաշվետվությունում՝ 398, տարբերություններ կան նաև մյուս ցուցանիշների միջև, (ավտոճանապարհներ, մայթեր, կառուցապատված տարածքներ և այլն),

– առկա են անհամապատասխանություններ նախատեսվող մանկական խաղահրապարակին վերաբերող տվյալների միջև,

2. հաշվետվությունում սխալ է կատարված շինարարության փուլում ջրցանի համար նախատեսված ջրածախսի հաշվարկը,

3. հաշվետվությունում ներկայացված են հակասական տվյալներ շինարարության ընթացքում շինհրապարակում առաջացող կեղտաջրերի հեռացման եղանակի վերաբերյալ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ մասի 1-ին կետը և հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի 1-ին փողոցի 7 հասցեում հասարակական նշանակության օբյեկտի վերակառուցում բնակելի թաղամասի և նոր թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Քրիստինե Հարությունյան